ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 473 - Ա

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի հոկտեմբերի 14-ի № ԴԽ//38788-2026 գրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանին, Տոյոտա Քամրի մակնիշի 600 CX 61 պետհամարանիշի ավտոմեքենայով, 3 օրով՝ 2026 թվականի նոյեմբերի 2-ից 4-ը գործուղել Երևան, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ կազմակերպող «Մարդը՝ հանրային ծառայությունների կենտրոնում. վերաիմաստավորում մարդակենտրոն նախագծման միջոցով» խորագրով միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով:

2. Ֆինանսական վարչության պետին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

2026-10-30 16:20:03 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**